

ՄԵԼԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ֆ Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ աօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ է Ֆ Օ Ն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ընդհանուր թունաւորում.—Ներքին Տե-
ստիկութիւն. Մամուլ. Մատենագրութիւն. Օպե-
րային ներկայացումներ. Նամակ ֆոթիցի. Նա-
մակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—Ար-
ՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հարաւաֆրիկական
պատերազմի առիթով. Արտաքին լուրեր.—Հե-
ՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայկական ապագայութիւն:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՈՒՆԱՌՈՒՄ

Մեր մէջ պախարակելի է համարվում
արեւելոցութիւնը: Մարդիկ աշխատում են
չէ հասնել այնպիսի անզգայ եւ խայտա-
ռակ վիճակի, որ թաւալվեն փողոցներում,
մնալով բոլորովին անպաշտպան: Սակայն
գինին եւ օղին գործ են ածվում դարձեալ
այնքան անբարեխառն եղանակով, որ ար-
բեցողութեան յատուկ ֆնասակար ազդե-
ցութիւնը կատարում է իր աւերիչ փորձը
անարգել կերպով: Ոգեկից ըմպելիքների
առատ գործածութիւնը գտնում է խա-
տաղ զատարարութեան մէջ. նա համար-
վում է վայելուչ կեանքի ապացոյց եւ մի
որոշ աստիճանի բարեկեցութեան նշան:

Նորագոյն գիտնական հետազոտութիւն-
ները ցոյց են տալիս, որ օղին եւ գինին
նոյն իսկ այն ժամանակ, երբ սակաւ քա-
նակութեամբ են գործ ածվում, ազդում
են ֆնասակար կերպով մարդու ֆիզիկա-
կան եւ մտաւոր կարողութիւնների վրա:
Իսկ մեր մէջ խմելի այն քանակութիւնը,
որ արեւելոցութիւնն չէ առաջ բերում, հա-
մարում ենք ներքին գործածութեան հա-
մար: Բիւզին եւ Միւրնը բազմաթիւ դե-
տոլութիւններ անընդ յետոյ համոզվե-
ցին, որ ալքոհոլը մտաւոր ոյժերի վրա

կրէք չէ ազդում բարերար կերպով, այլ
գործում է շմեցնող, բթացնող, թմրեց-
նող եւ թուլացնող ազդեցութիւն: Վետրէ,
Օգեկեցիօսկի եւ Նիւրկ հաստատում են,
որ ալքոհոլը թուլացնում է մկանուններն-
ընդ եւ թէնէ գրգռում է նրանց զէպի գոր-
ծունէութիւն, բայց այդ գործունէու-
թիւնը կատարվում է մկանունների ոյժի
հաշիւին: Մկանունները մի տեսակ հալվում
է, մաշվում է եւ թուլանում:

Մտաւոր եւ ֆիզիկական ոյժերի թու-
լանալու պատճառով մարդ կորցնում է իր
կամքը գործութիւնը եւ դառնում է ենթա-
կայ զանազան աննպատակ ազդեցութիւննե-
րին: Նա հեշտութեամբ դիմում է յանցաւոր
մտածողութեան եւ շուտով շեղվում է դէ-
պի անառակ եւ անբարոյական կեանք: Պրո-
ֆէսոր Մարո հաշուել է, որ Նոտայիայում
տեղի ունեցող յանցանքների 60 տոկոսը
հետեւանք են ալքոհոլի գործածութեան:
Բիւզին Գրասկանի նկատել է, որ Ֆլորեն-
ցիա քաղաքում հիւանդութիւնների 50%
արդիւնք է ալքոհոլի ազդեցութեան: Նիւրկ
վիճակագրական կերպով ապացուցանում
է, որ Նիւրկայիայում մահացողութիւնների
61/2 տոկոսը առաջացել է ալքոհոլից: Բազ-
մաթիւ ուրիշ գիտողութիւններ հաստա-
տում են նոյն երեւոյթը զանազան դէպքե-
րում:

Ժամանակ է, որ մեր հասարակութիւ-
նը լուրջ ուշադրութիւն դարձնէր այն
տարածված թոյնի վրա, որով նա կանո-
նաւոր եւ սիստեմական կերպով քայքա-
յում է իր ֆիզիկական եւ մտաւոր կարո-
ղութիւնները, չէ ինչպիսիք նաեւ մատաղ
սերունդը, որը սովորում է ոգեկից ըմպե-
լիքների գործածութիւն մանուկ հասա-
կից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Տգէտ ու խաւար հասարակութիւնների մէջ
սովորական բան է տեսնել այնպիսի ստորու-
թիւններ, որոնք միայն զգուհեղ կարող են
պատճառել զարգացած, ինքնաճանաչ հասա-
րակութիւններին: Օրինակ, Արեւելքում միայն
խաւարը կարող էր դարձնել ընթացում օրի-
նականացնել այնպիսի անպատիւ գործողու-
թիւններ, որոնք կատարվում են այնտեղ կո-
նական պրոպագանդայի անուան տակ: Մենք,
հայեր, ամենից լաւ ենք փորձել մեր կաշու-
վրա այդ անպատիւ գործողութիւնների ամ-
բողջ կակիճը: Թողնե՛ք անցալը. ներկայումս
էլ, երբ երջանիկ ազգերը պատրաստվում են
պատուով մտնել XX դարը, մենք դեռ չենք հե-
ռացել այն հնադարեան դրութիւնից, երբ կա-
րելի էր լինում վաճի անցեալ տարվայ կրո-
նափոխական խայտառակութիւնների նման գոր-
ծեր կատարել: այնքան ստորացնել մարդկային
պատիւն ու արժանաւորութիւնը, ցեխոտել ա-
մեն մի զաղափար, ամեն մի մաքուր հասկա-
ցողութիւն: Մեզանում դեռ կայ եւ երկար
ժամանակ կը մնայ այն միջնաւայրը, ուր այդ-
պիսի գործողութիւնները ընական եւ արդա-
րացի կը համարվէին Պատճառը: Որովհետեւ
տգէտ ու խաւար ենք մենք, տգէտ, անբարե-
խիղճ եւ ծոյլ է մեր հոգեւորականութիւնը:
Մի կաթօյլի կամ բողբոջի քարոզիչ չի
համարձակվի մտնել մի եւրոպացու եւ ա-
ռաջարկել նրան իր օրհնափոխութիւն: առեւտրա-
կան միջոցով: Եւ պատճառն այն չէ, որ այդ
եւրոպացին շատ հաստատ եւ համոզված է իր
դաւանութեան մէջ, այլ այն, որ նա զարգա-
ցած ու հակադրող է, այնքան զարգացած, որ
գիտէ թէ դա մի ստոր, անարժան սակարկու-

թիւն է: Բայց նոյն քարոզիչը Փոքր-Ասիայում
այդ իսկ առեւտրական միջոցը կարողանում է
առաջարկել ոչ միայն անհասանելի, այլ ամ-
բողջ համայնքներին եւ աղողութիւն է դառ-
նում, որովհետեւ տգէտ մարդկանց հետ գործ
ունի, իսկ տգիտութիւնը ամեն չարիքների եւ
մանաւանդ պատուի ու արժանաւորութեան
հասկացողութիւնների ոչնչացման գլխաւոր
պատճառն է: Մենք չարունակ այս ենք կրկ-
նել. մենք չարունակ այն ենք ասել, որ մեր
ժողովրդի անգրագէտ ու խաւար հովիւներն են
պատճառ, որ այսքան անպատիւ դրութեան
մէջ ենք ամբողջ քաղաքակրթված աշխարհի
առաջ: Դա մի իրողութիւն է բոլոր տգէտ ազ-
գերի համար: Ահա «Русское Богатство» ամ-
սագրի վերջին համարում գտնում ենք մի վե-
րին աստիճանի հետաքրքրական յօդուած, որ
պատկերացնում է յոյն հոգեւորականութեան
արարքները Սիրիայում եւ Պաղեստինում:
Պատմվում է թէ ինչպէս այդ հոգեւորա-
կանները պոկում են ամբողջ ժողովուրդը եւ
ուխտաւորների այն հաւաքին բազմութիւնները,
որոնք ամեն տարի գնում են Պաղեստին: Բայց
ինչ են տալիս այդ հոգեւորականները, գոնէ
աշխատում են նրանք, որ իրանց հօտը (քաղ-
կացած է գլխաւորապէս քրիստոնեայ արարքնե-
րից) ամբողջ մնայ, ցան ու ցիւր չը լինի եւ
միշտ կարելի լինի նրան խուզել: Յօդուածա-
գիրը խօսում է օտար եկեղեցիների կրօնական
պրոպագանդայի մասին:

Ինչ է կրօնական պրոպագանդան Պաղես-
տինում եւ Սիրիայում: Դա կրօնական հա-
մոզմունքների մի մրցութիւնն է, երբ բա-
րոյական ապացոյցների միջոցով աշխատում
են ցոյց տալ մի դաւանութեան գերազան-
ցութիւնը միւսի վրա. դա կոչւ է, որի մի-
ջոցով եւրոպական մի ազգ աշխատում է
գերակշռութիւն ձեռք բերել Ասիայի վրա. դա
մի խաղ է տեղական անկիրթ ազգաբնակչու-
թեան ամենատար ինստիտուտների վրա, մի

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Բայց ֆանատիկական անհամբերողութեան
ամենատաճիկ ծնունդը քաղաքական մատնու-
թիւններն էին, որոնց յաճախ դիմում էին եր-
կու մրցող կողմերը եւ որոնք սարսափելի ա-
ղէտներ էին պատճառում թէ մէկին եւ թէ
միւսին: Քանի քանի տներ են քանդվել, քանի
քանի մարդիկ են մաշվել բանտերի մէջ, արիւն
թափել կախաղանների վրա, հալածվել, անյայ-
տացել աքսորավայրերում: Եւ այդ բոլոր սար-
սափները չորսնէ այն հանգամանքի, որ դա-
ւանական խտրութիւնը անտանելի բան էր
դարձել արեւնակից եղբայրների մէջ եւ մի եղ-
բայրը կրօնասիրական առաքնութիւն էր հա-
մարում մատնել միւսին մահմեդական իշխողի
ձեռքը եւ սիրտ հովացնել, տեսնելով նրա տան-
ջանքները: Մենք չենք ասում թէ այս ողբերգ
դրութիւնը միայն հայերի մէջ գոյություն ու-
նէր: Ո՛չ, նա ամեն տեղ էր, ուր Հոռոմ ճիգեր
էր թափում վերականգնելու իր համաշխար-
հային տիրապետութիւնը. Եւրոպան էլ ազատ
չէր այդ առիթով թափվող արիւնից ու ար-
տասունքներից: Բայց այդ համատարած իրո-
ղութիւնը չէ կարող, ի հարկէ, արդարացնել
ոչ ռքին: Պատմութիւնը, ամառը սրտին բեւե-
նելով հեղինակներին, չէ կարող բարոյական
մաքրութեան վկայական տալ եւ այնպիսինե-
րին, որոնք մատնութիւնները եւ նրանց հետ
կապված սարսափելի հետեւանքները գործ էին
ածում իրեն պաշտպանողական միջոց:

Լուսաւորչական հայերն էլ իրանց պաշտ-
պանելու համար էին մատնութիւնների դի-
մում: Նրանց արդարացնել, ի հարկէ, չէ կա-
րելի: Բայց մեղաւորը մեղաւոր նրանք չէին. ան-
բարոյականութիւնը դարձեալ Հոռոմի կողմից էր
գալիս: Հոռոմ գործակալներն էին, որ կրօնա-
փոխութեան գործը հեշտացնելու համար օգ-

նութեան կանչեցին թաթարական անգրու-
թիւնները. փոխանակ յոյս դնելու քարոզի,
խաղաղ միջոցներով համոզելու վրա՝ Բրիտանի
փոխանորդ համարվողները սուլթանների, շա-
հերի, խաների ու փաշաների բարբարոսական
կրքերի վրա էին լինում: Իսկ թէ այստեղից
որքան տառապանքներ պիտի ծնվէին այն թը-
շուառների համար, որոնք գէթ կրօնի, հոգու
գործերի մէջ ուղղում էին մի քիչ ազատ, բնա-
րոյ, անկախ լինել—այդ հասկանալի է եւ ա-
ռանց երկար բացատրութիւնների:

Իրենք մի փաստ: Պապական նուիրակի
պաշտօնով Պարսկաստան գնացած Անսիրի ար-
քեպիսկոպոսը մի մանրամասն զեկուցագրի մէջ
յայտնում էր պարսից Շահին թէ ինքը, որպէս
պապի ներկայացուցիչ, հարկադրված է բողոք-
այն ներկայացնել, որովհետեւ Պարսկաստա-
նում ստորագրում են իր պատիւը եւ արժա-
նաւորութիւնը: Ստորագրողները հայերն են:
Մենք եւ անտանելի վիրաւորանք էր պապական
նուիրակի համար այն, որ հայերը յամառում
են իրանց հերձուածի մէջ: Եւ ահա թէ ինչ-
պէս: Յայտնի է, ասում էր արքեպիսկոպոսը,
որ պապը Յիսուս Քրիստոսի անդապա՛ն է
երկրիս երեսին եւ հախարհիս բոլոր թագա-
ւորները հպատակվում են պապին ու պատ-
ւում են նրան իբրեւ այդ աստիճանը կողմի
Սակայն, չը նայած բոլոր ազգերի այդ համա-
ձայնութեան, մի բուն հայեր, քրիստոնեայ
լինելով անդերբն, մերժում են հպատակվել
պապին: Այդ դեռ բաւական չէ, եւ բուն հա-
յերը, իրանց ըմբոստութեան մէջ աւելի պինդ
պահվելու համար, իրանց մէջ այնպիսի մարդ-
կանց են հոգեւոր բարձր աստիճաններ տալիս,
որոնք յայտնի են իբրեւ պապի ամենախիստ
հակառակորդներ: Հայերը իրանց ամբարտա-
ւանութիւնը նոյն իսկ այն աստիճանին են
հասցնում, որ որոշ տօներին նզովել են կար-
դում իրանց եկեղեցիներում պապի նախորդ-
ների դէմ: Մի շինծու գոռոզութեամբ դիպո-
ւաւոր-արքեպիսկոպոսը յայտարարում էր, թէ
այդ հանգամանքը աւելի արհամարհանքի է
արժանի, բայց մի եւ նոյն ժամանակ առաջ էր

բերում մի այսպիսի նուրբ փաստաբանութիւն:
Պապը, ասում էր նա, իր հպատակների մէջ
պահպանում է մի խորին պատկառանք դէպի
նորին մեծութիւն Շահը, բայց կարող է գան-
դառնել, որ Շահն էլ նոյնը չէ անում իր վե-
րաբերմամբ: անշուշտ պապը պիտի կարծէ թէ
այդ բոլորը կատարվում է հայերի մէջ Շահի
հրամանով կամ թոյլտուութեամբ, թէն իսկա-
պէս կատարվում է առանց նորին մեծութեան
գիտութեան *):

Իրաւագիտական այս նուրբ մանուածքի
մէջ զգուհար չէ նկատել, որ «սուրբ» հայերը,
առանց խղճահարկվելու, պետական անհաւա-
տարմութեան կասկածներ էին տարածում ամ-
բողջ հայ ժողովրդի վրա, շահագործում էին
պապի ներկայացուցիչ, հարկադրված է բողոք-
այն ներկայացնել, որ ընտելութիւնների փոթորիկ
յարուցանեն մի ազգի դէմ, որ առանց այդ էլ
խորովվում էր օր ու գիշեր: Հային տանջում,
կեղեցում էին՝ մահմեդականացնելու համար.
Քրիստոսի փոխանորդները տեսնում էին այդ,
եւ ոչ միայն չէին համարձակվում ծպուտ ան-
գամ հանել այդ իրողութեան դէմ, այլ եւ ու-
ղում էին, որ իրանց էլ տրվի հարստահարելու,
կեղեցելու նոյն իրաւունքը, որպէս զի մահ-
մեդականութեան ճանկերից ազատված հայու-
թեան պատառները կարելի լինի պապական
դարձնելու եւ նկատեցէ՛ք, բերանի մի անկիւնով
այսպիսի բաներ շնչեղով պարբից կառավա-
րութեան ականջին, նրանք եւ յուս անկիւնը
դարձնում էին դէպի հայերը եւ յուսադրում էին
նրանց Եւրոպայի օգնութեամբ...

Եթէ Հոռոմ գործակաւորները հնարաւոր
էին համարում այս տեսակ ստորութիւններով
յաղթել հայերի յամառութիւնը, հայերն էլ
ոչինչ անյարմարութիւն չէին տեսնում այն
ընտելութիւնը, թէ լատինները լրտեսութիւն
են անում Պարսկաստանում, թէ նրանք կրօն
են տարածում, այլ ապատարմութեան եւ յի-
ղափոխութեան մտքեր: Տուրքմօր հաւատաց-
յալն է թէ այս ամատուլթիւնները տեղ էին

հասցնում կաշառքների միջոցով եւ հայերը
այդպիսով կարողացան, վերջ ի վերջոյ, հե-
ռացնել քարոզիչներին իրանց երկրից: Այդ
պատճառով էլ Տուրքմօր այնքան վրդովված
է շահաւորածող հայերից՝ դէմ եւ բացառապէս
է թէ նրանք եւ մի քանից այնքան չեն վա-
խենում, ինչպէս մեր (կաթօյլի) քահանաների
սուրբ առաջադիմութիւնից: Այս խօսքերի
մէջ նստած է XVII դարի կաթօյլի, թէն
նա մի եւ նոյն ժամանակ գիտուն բուսաբան
էլ էր: Ուրիշ կերպ չէ կարելի հասկանալ թէ
ինչպէս էր, որ այդ գիտնականը իր ճանա-
պարհորդութեան ժամանակ ոչ մի տեղ չը
զգաց, թէ երբ մի ժողովուրդ յամառութեամբ
կպած է իր կրօնին, իր հաւատալիքներին,
նրան դուռով, ակամայ, բռնի կերպով կրօնա-
փոխ անելը անարդարութիւն է եւ թէ չէ
կարելի այդքան վրդովվել «սուրբ» առաջադի-
մութեան խանդարման համար, քանի որ այդ
առաջադիմութիւնը սուրբ լինել չէր կարող
հէնց այն պատճառով, որ ձեռք էր բերվում
քաղաքական ինտրիգների միջոցով, մի ամ-
բողջ ժողովրդի պառակտման, արտասուքների
գնով...

Ի դուր, սակայն, կարծում էին Բրիտանի
տեղապանները թէ պարսից շահերը այն ա-
տիճան երեխաներ են, որ իրանց ձեռքով կը
հասցնեն կրօնափոխութեան պառուղը եւ կը
զգեն պրոպագանդայի բերանը: Պարսիկն էլ
կրօն ունէր եւ նոյնպէս պարտաւորված էր իր
կրօնին հետեւողների թիւը աւելացնել: Եթէ
հայերը որս էին, ինչն էր նրանք չը պիտի որ-
սայցվէին Մուհամմէդ մարդաբէի համար, այլ
պիտի յանձնվէին ինչ-որ պապի ձեռքը: Զու-
ղայի խոսվութիւնները, մատնութիւնները հէնց
այդ միտքը տուին պարսիկներին, եւ Շահ-
Յուսէինը կամեցաւ հրաման արձակել, որ
հայերը մահմեդական դառնան: Բայց նոյն
Յուսէինն Միւրազ վարդապետը, որին տե-
սանք եղբայրների դէմ կուլելիս, պաշտպանեց
քրիստոնէութեան ճշմարտութիւնը պարսիկ
հոգեւորականների առաջ եւ խափանեց Շահի
մտադրութիւնը: Զուղան չը մոռացաւ իր ա-

*) «Сном. Пет. Вел.», стр. XIII.

կուր, որ ստեղծվել է ազգաբնակչության զգալի մասի կողմից և զանազան եւրոպական ազդեցությունների շնորհիվ ընդհարման պատճառով:

Կրթական պրոպագանդան այժմ ամեն ուղի այդպիսի հանգամանքներ, նպատակներ ունի: Ինչպե՞ս, սակայն, աջակցում է այդպիսի հակաքրիստոնեական և հակամարդկային գործունեություններ: Տեղացի հոգեւորականները ազդեցում են, մտածում են միայն իրանց զոհող գոյությունից, ժողովուրդը դարձյալ չունի և չէ էլ կարող ունենալ, քանի որ հովիտները ազդեցում են: Բայց այդպէս չեն կրթամոլությունները քարոզողները:

Թե՛ կաթոլիկները և թե՛ բողոքականները շատ լրջութեամբ են նայում իրանց գործին և հասկանում են, որ կրթական պրոպագանդայի մէջ ամենակարեւոր դերը խաղում են կրթված հոգեւորականությունը, լաւ, ճարտար քարոզիչները, իսկ գլխավորապէս՝ երկրասարգութեան կրթությունը:

Բայց էժան չէ նստում այդ կրթությունը այն խեղճներին, որոնք դպրոցի միջոցով պիտի բազմացնեն «Տիրոջ հուները»:

Կրթությունը, որ տալիս են կաթոլիկները և բողոքականները երկրասարգութեան, մասնաւոր հոգեւոր և տարրական դպրոցներում, ընդունում է այնպիսի ձևեր: Երեւանի գլխավոր դպրոցում են սխոլաստիկայի անպէտք տակաւններով, մի և նոյն ժամանակ ամենամարմարաւոր կերպով բացատրվում է թէ ինչ զանազանություններ կան այս և ուրիշ քրիստոնեական դաւանությունների մէջ: Այդ բոլորը անվտանգ է շտապով, ուստի այդ կրթութեան հետեւանքը լինում է արհեստական կերպով դարձեցնում կատարողներին միւս դաւանությունների դէմ, միակողմանի հայեացք կենտրոնի և ուրիշ հարցերի վրա:

Իսկ, առ, մեր կարծիքով, կրթություն չէ, այլ թունաւորում և անշուշտ դաւանափոխները աւելի երջանիկ դրութեան մէջ չեն, քան իրանց նախկին դաւանաւորները: Թե՛ որ աստիճանի է հասնում ժողովրդին պատճառ խաւարը, այդ երևում է նրանից, որ Սիրիայի շատ բնակիչներ չը գիտեն նոյն իսկ թէ ինչ են իրանք՝ կաթոլիկ, բողոքական, յունադաւան, թէ գուցէ և մանկեղանակ: Եւ յորումադիրը իրաւաբէ կերպով նկատում է:

Մինչև իսկ թուում է ինձ, որ եթէ Թուրքիան աւելի մեծ ուշադրութիւն դարձնէր իր պետութեան մէջ գոյութեան ունեցող ազգութիւնների և նրանց դաւանած կրթութեան վրա, եթէ նա ունենար աւելի շատ պետական իմաստութիւն, այն ժամանակ քրիստոնեաներ նրա ամբական դաւաններում

գտաւարին և յարգէր նրա յիշատակը սուրբի հոգևոր: Մենք էլ պիտի ծանօթանանք այդ դէմքի հետ:

Ժողովրդական աւանդությունը հրաշքներ է պատճառում Յովնանէս վարդապետի գիտնականութեան մասին: Ասում են, որ երբ Շահ-Յուսէինը հրաժայեց իր գիտնական մօլլաներին կրթական վէճի նստել հայ վարդապետի հետ, պարսից այդ իմաստունները ծուկ չընկնեցին և աղաչեցին թագաւորին չանել այդպիսի բան, որովհետեւ, ասում էին, Յովնանէս վարդապետը գիտնական է, մենք նրանից ենք իմաստութիւն սովորում և նրա դէմ գնալ չենք կարող *): Վարդապետը հմուտ պարսկագէտ և արարագէտ էր, թարգմանել էր ամբողջ Աւետարանը պարսկերէն և արաբերէն լեզուներով, բայց դրանից նա ճարտար նկարիչ էր, այնքան բնատուր ընդունակութիւն ունէր, որ նոյն իսկ անուաւոր ժամացոյց էլ չլինէր: Եւ վերջապէս նկատի առնենք նրա ստացած «տիեզերալոյս» անունը, որ անգլից գիտնականութեան մի վկայութիւն է: Գուցէ մասամբ հասկանալի լինի այդ տիպոսը, եթէ աչքի առաջ ունենանք վարդապետի մեծ աշխատասիրութիւնը: Նա գրել է 19 հայերէն շարադրութիւններ, բոլորն էլ կրթական բովանդակութեամբ: Հայ պորտաբոյժ և հայկատակ հոգեւորականութեան մէջ այնքան անօրինակ էր այդպիսի գրասիրութիւնը, որ Յովնանէս վարդապետի վերաբերմամբ չափազանցութիւն չը պիտի համարվէր «տիեզերալոյս» անունն անգամ: Բայց բայց այդ տիպոսից, նրան յատկացրված էր և «Թագաւորաց Աստուածաբան» պատուանունը, որովհետեւ նախ քան Շահ-Յուսէինին հետ կրօնի մասին խօսելը, նա հոգակված էր իրեն և մի հեղինակի, որ քրիստոնէութեան վերաբերութեամբ երկար բացատրութիւններ էր տուել և նրա հօրը, Շահ-Սուլէյմանին: Պատմում են, որ մի անգամ Շահ-Սուլէյմանը, այցելելով Ամենափրկչի վանքը, հարց ու փորձ է սկսում պատ-

*) Անգլագերբ շարաթարգման, Մ. տարի, № 12, էր. 95.

շատ քիչ կը մնային: Բայց մահմեդականները միշտ ընդգծել են խտրութիւնը իրանց և մի ուրիշ կրօն դաւանողների մէջ: Երբեմն նոյն իսկ մահմեդական կառավարութիւնը ինքն է ծածուկ կերպով երկպառակութեան սերմեր գցել կրթական տարածաշրջաններին մէջ և ևս սարքում է քրիստոնեաների կոտորած: Այսպէս էր XIX դարի 60-ական թւականներին, երբ գրողները, կառավարութեան ծածուկ խրատներով, սարսափելի կոտորած արին Լիւթանում և Անտիպիւրանում: Հայկական կոտորածները՝ երկրորդ պարզ օրինակն են պետական կազմակերպած դաւանութեան: Սրանք մարդարիւններ են թիրաքւած պետական վարչութեան սխառտեմի մէջ, մի բազմապոչ տարրը թուլացնելու միջոց: Մահմեդական ազդեցութեան կրթութիւնն էլ միշտ իր պարտքն է համարել ամեն մի յարմար միջոցով ցոյց տալ քրիստոնեաներին, թէ որքան խախուտ է դեռ արաբական խաղիքները: Նրանց տուած իրաւունքը, ամեն կերպ վերաւորել է քրիստոնէայի ներքին, աւելի ևս ուժեղացնելով դարերի ընթացքում կուտակված անդուլթիւնը: Այս բոլորը միասին վերցրած, դաւանում է մի անաղին պատ, որ բաժանում է քրիստոնեաներին մահմեդականներից:

Հէնց այդ պատն է մի մեծ պատճառը, որ քրիստոնէութիւն մնացել է Արեւելքում, այն ողորմելի, խաւար ազգերի մէջ, որոնցից մէկն են սիրիացիները և որոնց թիւն անպատճառ պէտք է աւելացնել և հայերին, որքան էլ դա վերաւորական լինի մեր սնապարծութեան համար:

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

I
Վիկտոր Հիւգօ. Քերտր ծերունի. Առաւելս փոխադրութիւնը թարգմ. Մ. Սիրիայի, 81 էր. դիւն 15 Կ. Թիֆլիս 1900.

«Քերտր ծերունի» նիւթը վերցրած է Վիկտոր Հիւգօյի յայտնի «Քիւնտան» վէպից: Քերտր ծերունին եպիսկոպոս Սիրիէին է, որ փոխանակ հասարակական հիմնարկութիւնները իր ժամանակը բնակարանը դարձնելու՝ իրան յատկացրած բազմաւնեւակ բնակարանը հիւանդանոց է դարձնում ու իրան վերցնում հիւանդանոցի փոքրիկ շէնքը և փոխանակ ամեն ջանք գործ դնելու զանազան «եկեղանակներով» հարստանալու՝ իր գրեթէ բոլոր ունեցածն ու ստացածը բաժանում է աղքատներին:

Գրքոյի մէջ պատմվում է այդ «արդար ծերունի» հանդիպումը՝ իր քաղցած ընտանիքը կերակրելու նպատակով հայ գողանալու համար դատաւարութեամբ ժանձնաւոր հետ,

կերներին մասին. Յովնանէս վարդապետը պատասխաններ է տալիս և ապա հաւաքելով թագաւորի հարցերն ու իր պատասխանները, կազմում է մի գիրք, մի երեւոյ հայերէն և մի երեւոյ պարսկերէն, ու ներկայացնում է իրանի ինքնակալին: Ամբողջ պալատը հիանում և աքնջանում է վարդապետի իմաստութեան վրա և մեծ պատիւներ է անում նրան:

Անա այդ «գլուխ-գործոցը» մենք ունենք մեր առջեւ դրած *) և կարող ենք հասկացողութիւն կազմել միւս աշխատութիւնների մասին, որոնք, որքան յայտնի է, մեծ մասամբ չը հրատարակվեցան և անյայտութեան մէջ էլ կորան: Գրութեամբ, եթէ նրա հետ կապված պահներ հեղինակի ստացած հոգեւոր, մեր առջեւ պարզվում է ժամանակի դրութիւնը, նրա ամբողջ հոգեւորութիւնը: Որքան քիչ բան էր հարկաւոր այն տղա դարում «տիեզերալոյս» դաժնալու համար: Եթէ ճիշտ է, որ Շահին չափ ամբողջ արեւելքը հիացած էր հայ վարդապետի իմաստութեան վրա, եթէ ճիշտ է, որ վիսկնում էին նրա հետ վէճի բանվելու, դա միայն կարող է հաստատուել այն, յսուհանայն դէպք անսխալ, իրողութիւնը, որ պարսից արքունիքն էլ չէր բարձրացել մտաւոր դարձացման այն ստոր աստիճանից, երբ մի վարժ ու ընդունակ գրագէտ, մի շատ կարգադատ մարդ ապրիւնում է մարդկանց: Միւս «տիեզերալոյս» իր մտաւոր նեղ ու սահմանափակ հօրիզոնով, իր աղքատիկ պաշարներով մէկն էր այն հայ վարդապետներից, որոնք միջնադարեան սխոլաստիկայի չոր ու ցամաք մտնողը գործ էին դնում աստուածաբանական հարցեր լուծելու համար և որոնց գրութեանը

*) Տպված է Վալիսթալում 1797 թին հետեւայ վերնագրով. «Գիրք պատմութեան արարակ» Կ. Նոր Ջուրջուտ սուրբ Սաննափիլի: Գրադրած Վալիսթալում Յովնանէս ճշգրտեց վարդապետի վիճարանութիւնն առ Շահ Սլէյման Պարսից: Մի վերին աստիճանի անշուշտ տպագրութիւն է, իր անհամար սխալներով, աստիճան կէտաւորութեան. տպողը ծանօթ չէ եղել արեւմտի նոյն իսկ տարրական պահանջներին, այդ պատճառով դրքը աղճատված է, և ջանքեր են հարկաւոր նրան հասկանալու համար:

որ տաժանակիր աշխատանքների ժամանակը լրացնելուց յետոյ վերադառնում է հայրենիք և ճանապարհին չէ կարողանում նոյն իսկ փողով օթելուս ու կերակուր գտնել, որովհետեւ ժողովուրդը իմանում է նրա անցեալը:

Ամենքից հալածված, քաղցած, յոգնած՝ Ժանձնաւոր ապաստան է գտնում և հիւրասիրվում եպիսկոպոսի բնակարանում, ուր և դիչերում է: Գիրքը նա գողանում է եպիսկոպոսի բնակարանում մնացած վերջին արծաթեղէն բաները և փախչում է: Ոստիկանները բռնում են գողին և բերում եպիսկոպոսի մօտ, որ արձակել է տալիս ձերբակալվածին, յայտնելով, թէ ինքն է ընծայել նրան այդ արծաթեղէնը, և յորդորում է նրան սկսել նոր, աղին և կանաչ:

Քրիստոնէական ներդաշնակութեան և ճշմարիտ մարդասիրութեան այդ վերջին արտայայտութիւնը խորապէս ազդում է Ժանձնաւորի վրա, որ երախտագիտութեամբ լի սրբատու ընկնում է եպիսկոպոսի ոտները:

Այդտեղ վերջանում է գրքոյի պատմութիւնը, որի մէջ, չը նայելով փոխադրութեան միջակութեանը, այնուամենայնիւ գրագրվում է աշխարհիս ամենամեծ իդէալիստի հանճարի շունչը:

Այն ընթերցողները, որոնք հնարաւորութեան չունեն կարգաւ Վիկտոր Հիւգօյի «Քիւնտան»-ը, չեն զղջալ, եթէ գնեն այդ փոխադրութիւնը, որի թարգմանութիւնը բաւական աղող է, թէ և թարգմանիչը գուր է գործ անել այնպիսի բաներ, ինչպէս Կօզիբի և Կոզիբի և Կոզիբի կարելի էր թարգմանել ճակատնոց, իսկ չուզելի (թափած երկով) համար ժողովուրդը ունի թուշ բառը:

II

Левонъ Мсерианцъ. „Антигона“ Софокла. Москва 1900 г.
Պ. Լ. Մսերիանցի գրքոյի մի հետաքրքիր քննադատական մեկնութիւն է Սօֆոկլի գլուխ գործոց համարվող «Անտիգոն» ողբերգութեան, որի հերոսուհին մարմնացած բողոք է կամայականութեան դէմ՝ յանուն մարդկային յարմարական իրաւունքների:

Ով հետաքրքրվում է հին յունական հանճարների անմահ երկերով, հաճոյքով կը կարգաւ գ. Մսերիանցի գրքոյի:

Ոչնչով լաւ կամ վատ չեն Յովնանէս վարդապետի փիլիսոփայութիւններից, թէ և «տիեզերալոյս» կոչվելու բախտին չեն արժանացել: Նոյն իսկ լեզուի կենդանութիւն, ոճի հարստութիւն, ուղեղի պերճարանութիւն կամ վճիտ պարզութիւն մենք չենք գտնում Զուլայի գրված գիտնականի մօտ: Այլ ևս չենք խօսում այն մասին, որ մինչև իսկ սխոլաստիկան էլ չէր կարող ցոյց տալ այդ գրքի մէջ մի հատ նորութիւն, մի գոհար:

Բայց ինչպէս էր, որ մի այդպիսի սովորական միջակութիւն արժանացաւ այդքան մեծ պատիւների: Այս հարցի պատասխանը պէտք է որոնել ժամանակի դրութեան մէջ:

Զուլայն հետզհետեւ ընկնում էր: Կարճատեւ էր այդ փարթեմ ու փայլալից գաղթականութեան փայլը հայկական հօրիզոնի վրա: Նա մի գիտաւոր աստղի կենսւց ստացաւ և աւելի չէր կարող ունենալ, քանի որ այնքան մօտիկ հարեւան էր պարսից մայրաքաղաքին: Զրկեցէ՛ք վաճառականին արտօնութիւններից, և նա կը դառնայ ջրից հանած ձուկ: Պարսից կառավարութիւնը մի ժամանակ քաղաքներում էր հայ վաճառականներին, բայց դա մի ժամանակ էր, Շահ-Աբաս մեծի ժամանակը: Այժմ ուրիշ աչքով էին նայում Զուլային. թագաւորները ծծել էին ուղեւոր հարստացած հայերին, և Զուլայն ընկնում էր, իսկ նրա ազգաբնակչութիւնը ուղեւորվում էր դէպի հարուստ Հնդկաստան:

Անկումը ամեն կողմով էր: Ամենափրկչեան դպրոցը համարեա այլ ևս չը կար: Մենք գիտենք արդէն, որ նա մեծ առաջադիմութիւն էր միայն ժամանակի ընդհանուր անգրագիտութեան համեմատութեամբ. բայց իսկական «տիեզերալոյս» տալու վիճակից, ի հարկէ, շատ հեռու էր Պարսկաստանի խրքում կղզիացած, գրքից որ և է լոյս չը ստացող այդ հիմնարկութիւնը: Բայց երբ մարում էր և այդ ճրագը, երբ նորից ընդհանուր անգրագիտութեան խառնար էր գալիս, բնական էր, որ իր անցեալով փառաւոր դպրոցի լաւագոյն աշակերտ Յովնանէս վարդապետը սքանչացողներ,

2) „Тексты и разыскания по армяно-грузинской филологии“ книга І. С. Петербургъ 1900 г. 3) Н. Марръ. „Агиографическіе материалы по грузинскимъ рукописямъ Иверы“. ч. І. С. Петербургъ 1900 г.

ՕՊԵՐԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

Նապարակելի «Դուրբովսկի» օպերան, որ տրվեց հոկտեմբերի 4-ին, գրաւել էր բաւական մեծ բազմութիւն: Այդ օպերան ուսուց օպերաների մէջ պատուաւոր տեղ է բռնում: Նապարակելի, հանճարաւոր Գլխավորի հետեւողը, իր մուգիկան գրել է բոլորովին այլ եղանակով: Գլխավոր ուսուց գեղարուեստական մուգիկան ստեղծելով, ժողովրդականին էլ քաղաքացիականութիւն տուեց, մինչդեռ Նապարակելի օպերայում ոչ մի ուսուց եղանակ չէր լուծւում: Նա հետեւել է գեղարուեստին միայն: Բայց և այնպէս դա ուսուց սիրելի օպերաներից մէկն է, որովհետեւ նիւթը Պուշկինից է վերցրած և երաժշտութիւնն էլ բաւական գեղեցիկ և մատչելի է: Մեծ գեր է Մաչինկայի գերը (հարսնացու իշխանուհի), որ կատարեց օր. Պապայան: Մեծ է և Դուրբովսկի գերը՝ Բորիսենկօ: Պիեսան պատում է այս երկու անձանց չորջր. Ամենից բարձր է այս գերում օր. Պապան: Նրանից յետ չէ մնում և Բորիսենկօ (եթէ չը խօսենք ձայնի պակասութեան մասին): Ասում են, որ այսպիսի գեղեցիկ Դուրբովսկի Թիֆլիսը չէ տեսել: Այս երկու գործող անձանց խաղից աւելի երգն է գրաւել: Միշտ «իբրեւ» (toujours aimer) պարզ դուշտը այնքան հիւսիսալի երգեցին, որ դուրս եկաւ մի երեւելի գեղարուեստական յօրինում: Առհասարակ այս գերերը նրանք սկզբից մինչև վերջը մեծ ճաշակով և ոգեւորութեամբ են տանում, թէ առանձին և թէ անսամբ երգելով: Վերջին գործողութեան մէջ օր. Պապան «Լեռնեք», նա կը զարթնի» տեսարանը յուզվելու աստիճան ազդու կատարեց: Միւս խաղացողներից աչքի էր ընկնում իր գեղեցիկ ձայնով Գերասիմենկօ իշխանի գերում: Ուսմը, պատկերներ, դիկորացիա, լոյս, պարեր և ամեն չընդունելի խառնված այնքան աղող կատարման հետ լարված էին պահում հասարակական ուշադրութիւնը: Շատ է նպաստում օպերայի աջողութեան տաղանդաւոր դիրիժօր Պապանի:

«Դուրբովսկի», որ «Բուսանի» հակապատկերն է իր լարմար բեմականութեամբ, կարող է միշտ աջողութիւն ունենալ և ճաշակ զարգացնելու մէջ որոշ դեր խաղալ:

մեծամեծ տիպոսներ հնարողներ ունենալ: Ուրեմն մեր տիեզերալոյսի ուսուցած գիտնականութիւնը ժամանակի տղիւտութեան չափին էլ է որոշում:

Կար, ի հարկէ, և այն հանգամանքը, որ Յովնանէս վարդապետը կարողացել էր ազատել հայոց եկեղեցին պարսկիների ձեռքից, և այդ կողմից միանգամայն հասկանալի և բնական է թէ ժամանակակիցների և թէ յետագաների երախտագիտութիւնը Եւ. կասկած չը կայ, որ այդ երախտագիտութիւնը աւելի մեծ չափեր կունենար, եթէ վարդապետը նոյն աջողութիւնն ունենար և եզուրիսների դէմ սկըւած կուր մէջ: Բայց այստեղ անհնարին էլ էր աջողութիւն ունենալ: Ստեփանոս եպիսկոպոսը, Է. Պապայի մէջ հաղածանք հանելով կաթոլիկների դէմ, կամեցաւ ընդհանրական դարձնել այդ հաղածանքը ամբողջ Հայաստանում. և հէնց, երեւի, այդ էր պատճառը, որ երբ ջուղայեցիները ջանքերով գահընկեց եղաւ Նահապետ կաթողիկոսը, Ստեփանոսը չտապեց կաշառքներով կաթողիկոսութիւն ձեռք բերել և գնաց իշխանի: Բայց դա վտանգաւոր խաղ էր: Նահապետը եզուրիսների աջակցութեամբ չուտով էլի գահ բարձրացաւ, իսկ Ստեփանոսը մատնվեց Երեսնանի խանի ձեռքը, ծեծվեց, բանտարկվեց և բանտում էլ մնաւ 1695-ին: Հէնց քան չէր եզուրիսների դէմ մարտնչել...

Երախտակեց մեր խօսքը յիսուսեան այս կրօնաւորների մասին: Նրանք երկար չը մնալիս հայերի մէջ. բայց անարդարութեան կը լինէր ուրանալ նրանց գործունէութեան դրական կողմը: Երկու խաչոր չարժուներ, որոնք մեր նոր պատմութեան անկիւնաքարերն են կազմում, առանց որոնց հայութիւնը դեռ շատ ժամանակ լճացած ու յետադէմ կը մնար, եզուրիսական աղեղնութեան տակ սկընաւորվեցին, սաղմնային դրութեան մէջ մտան: Այդ չարժուներից մէկն այն է, որ Իսրայէլ Օրիի անուան հետ է կապված, իսկ միւսը՝ Միլիթար Սերաստացու հետ: Առաջինը քաղաքական չարժու, երկրորդը՝ գրական:

(Գր. շարունակվի)

Շուտով բազմաթիւ կուսակցութիւններ ձեռնարկ արեցին իրենց հիմնական խնդիրը լուծելու համար։

ՆԱԽԱԿ ՓՕԹԻՅ

Սեպտեմբերի 19-ին

Փոթիում հայ մշակների թիւը բաւական մեծ է։ Մեծամասնութիւնը թիւրքալի վերջին դէպքերից փախած գաղթականներ են, որոնք պարտուած են սլաւոնական մարզանքի դործի վրայ։ Դրանք ունեն իրանց առանձին արտերկրները, որոնք փոխադրուած են բնակները փոխանակելու համար։ Կամ պահանջները, իւրաքանչիւր մշակ օրական ստանում է 1 ռուբլի մինչև 2 ռ. 50 կոպ.։ Բանում են ցերեկները, իսկ երեկոյան ժամի 7-ից սկսած մինչև առաւօտեան ժամի 6-ը աշատ են։

Համեմատելով այստեղի մշակներին Բալթիկի նաւթահանքերում բանող մշակներին հետ, կարելի է ասել, որ առաջինները երեք անգամ աւելի են վարձատրուում, քան վերջինները, ուրեմն եւ նախկինի կողմից Փոթիի մշակները պէտք է ապահով լինեն։ Բայց, դժբաղդաբար, իրողութիւնը այլ կերպ է ցոյց տալիս։ Բալթիկի մշակները մի քանի աստիճան բարձր են թէ նախկինից եւ թէ բարոյապէս։ Եւ ահա թէ ինչու։

Փոթիւ, ինչպէս գիտէք, հարուստ է գինեւաներով եւ արձարաններով։ արեւոդուրծիւնը տարածված է տեղական ժողովրդի մէջ։ Ամեն մի գինեւան մէջ հարկաւորութիւն մարդիկ կը գտնէին անխոր թոյր դասակարգերից՝ քահանայ, իշխան, աստիճանաւոր, մշակ եւ այլն։ Սկսած է ընդհանուր «քէֆը», մէկը միւսից քաշելու կամ պատիւը արտաւորող պայմանի չէ նկատում եւ այդպէս օր ու գիշեր անընդհատ շարունակվում է քէֆը։ Սրտի ցաւով պէտք է նկատել, որ հայ պահուստները զերծ չեն մնացել ընդհանուր ախտից, սկզբում քէֆ քէֆ, իսկ այժմ խմբերով, դրանք էլ լըսվում են գինեւանները եւ արձարանները, խմում են մինչև օրվայ դան ըրտինքի աշխատանքի հատնելով։ Իսկ եթէ բան է, գրպանում մի քանի կօպէկ կը մնայ, այն էլ, գինու ազդեցութեան տակ, անբարոյականութեան ճանապարհին կը մտնի։ Այսպիսի պայմաններում մշակն էլ արեւելից կարող է ապահով լինել կամ իր եւ մտերիմների ցաւերը հոգալ։ Նա մոռնում է օրվայ չարչարանքը, իր զոյգած ընտանիքը, ծնողներին եւ դասակարգին, մոռնում է իւր նայողութիւնը, պարտաճանաչութիւնը եւ վերջապէս կորցնում է իր առողջութիւնը։ Արեւոդուրծիւնը դառնում է սովորութիւն, որից բաժանվել յետոյ շատ դժուար է լինում։ Բաւական է, որ մի արտերի մէջ գտնվի մի կամ երկու գինեւոր, արեւելից, միւսներն էլ վարակվում են։ Նոյն իսկ կիրակի օրերը հինգհարիւրից աւել հայ մշակներից ոչ մէկին չէք գտնի եկեղեցում, այլ բոլորը լըսված են գինեւանները եւ արձարանները։ Զէ որ հայ մշակ, հայ պահուստի կրօնական զգացումները միշտ աւելի վառ է եղել, քան մի ուրիշ դասակարգի, բայց այժմ նա աղօթատունն անգամ մոռացել է։

Վռն.

ՆԱԽԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, հոկտեմբերի 1-ին

Անցեալ կիրակի էջմիածնեցի եկեղեցում կայացած ժողովը, ինչպէս յայտնի է, Թիֆլիսի առաջնորդ անվանի համարի եւ նշանակել է երկրորդ ժողով պայտօլայ համար։ Ընտրվեցին. Գ. Նախուսեան 47 ձայնով, Բ. Բ. Աղամալեան 39 ձայնով եւ Ե. Ե. Ալիօզով 26 ձայնով։

Այս անգամ եւս տեղի ունեցան անկանոնութիւններ, բայց աւելի ուշադրութեան արժանի է նախագահ Համադաս Քանախի անպատրաստութիւնը։ Այդ քահանան՝ ուղեւորելուց ցոյց տալ իր խիտ օրինապահութիւնը՝ առաջարկում է թիւրքալից երկու ծխականներին հեռանալ եկեղեցուց, պնդելով առաջնորդական կանոնների վրա։ Պահանջվում է կարգաւ պոկ կանոնները։ Քահանան ասում է թէ առաջ հեռացրէ՛ք յետոյ կը կարգուի Համադասը եւ, որ յետոյ ուշ կը լինի։ Այս հեշտ բանը տեքտէրը հասկանում է եւ կարգում է կանոնները։ Բանից դուրս է գալիս, որ մի թիւրքալից անհոգութեամբ տեքտէրի մտքում ընտրելի եւ ընտրող բաները չիփոխվել են։ Պահանջները չստանալով եւ իրանց տեղերը եւ մասնակցութիւնը ընտրութեանը։

Նախագահ քահանան առաջարկում է ընտրել մէկին, որն անգրագէտների փոխարէն գրէ թիւերը։ Չայնէր. — Տ. Նախագահ. — Ո՞վ է համաձայն։ Պահանջները վեր են կենում։ Նախագահ. — Տեսնում եմ, որ համաձայնվողների թիւը քիչ է, եւ առաջարկում եմ Թիւին, ով է համաձայն։ Նախագահը՝ գտնե-

լով որ համաձայնվողների թիւը չափ է. — Ե՛հ, ուրեմն Տ. Ն. Այսպէս հարցնում է. ում էք յանձնում թիւերի կարգաւ։ Չայնէր. — Տ. Ն. Նախագահը՝ գտնե՛ք, որ համաձայնվողների թիւը քիչ է. — Կուգէ՛ք եւ կարգաւ Չեն ուղում։ Վճռվում է. — Տ. Ն. կարգաւ Տ. Ն. հետեւի։

Թիւերի կարգաւորուց յետոյ, երբ դեռ ձայները չէին հաշոււ, Տ. Ն. այսինքն տողերից գրողը, յայտնում է, որ կարգաւորութեան ինքը նկատել է 7—8 թիւերի կարգաւ, որոնք մի եւ նոյն ձեռքի գրած լինելով տարբերվում էին այն անձնաւորութեան գրից, որ նշանակված էր անգրագէտների կանգնողներին նշանակելու համար. հետեւապէս՝ բանից դուրս է գալիս, որ երկու մարդ են եղել անգրագէտների համար գրելիս՝ մէկը՝ բաց-աշկարաց, ամենքի աչքի առաջ, միւսը՝ մի խուս անկիւնում։ Մի պարտն էլ յայտնում է, որ իմ ենթադրութիւնը ճիշդ է, որովհետեւ ինքն եւս նկատել է մի այդպիսի բան, սակայն ծանօթ չը լինելով ծխականների հետ՝ նա չէ կարող յիշել, որովհետեւ մարդիկ խառնվել, տեղերը փոխվել են։ Նախագահ. — Տ. Ն. համարում եմ ժողովը կանոնաւոր, ուստի կարգում եմ արձանագրութիւն։ Այս փոփոխ յոյժ են տալիս երկու նախկին երէցներին։ Թիւերի կարգաւ պահանջում են ասանած ստուգելու համար։ Մերժում. — Ով դժգոհ է, կարող է բողոքել. յայտնում է նախագահը։ Տողերից գրողը մասնաւորապէս ժամանակ չունի բողոքելու, ուր հարկն է...

Նամակ վերջացրել էի, երբ ինձ յայտնեցին, թէ բազմաթիւ ծխականներ հրաւեր չեն ստացել։

Գ. Տէր-Ղեւոնդեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Զորքալի, հոկտեմբերի 4-ին, արտի պայթումից յանկարծամահ եղաւ Թիֆլիսի Ներքին տեսչի պարտի ուսուցիչ Յարութիւն Ալիսաղեանը։ Հանգուցեալ երկու տարիներ ուսուցչութիւն է արել ոչ միայն Ներքին տեսչի, այլ եւ զանազան դաւաճական քաղաքների հայոց եկեղեցական-ծխական ուսումնարաններում։ Ալիսաղեան 48 տարեկան էր. նա թողել է մի փոքրահասակ որդի։ Լուսն էր, որ Ներքին տեսչի պարտի ուսուցչի հանգուցեալի որդուն։

Պետերբուրգի ուսաց կայսերական հնագիտական ընկերութեան մէջ, սեպտեմբերի 29-ին, պիոֆէսոր Ն. Ի. Վեռնիկովսկի նախագահութեամբ, տեղի ունեցան արեւելեան բաժանմունքի նիստը։ Հայագիտութեան պիոֆէսոր Ն. Մարր զեկուցեց՝ «Իպպոլիտի հեղինակութիւնների մասին X դարի վրացական ձեռագրի համեմատութիւնը Իպպոլիտի մեծագույն արտական Սարգիսի կղզու վրա։ Նրա գրութեանը կան մի քանի լեզուներ։ Զեկուցանողը հետազոտեց անկանոն իպպոլիտի պատկանող «Մեկնութիւն երգ-երգերի հեղինակութեան մի հին վրացական թարգմանութիւնը։ Այդ թարգմանութիւնը արված է մինչև IX դարը եւ ներկայացնում է ամենամեծ ընազիր Իպպոլիտի յայտնի հեղինակութիւններից, վրացերէն թարգմանութիւնը արված է հայերէն լեզուից, Վ. Ս. Գոլցնիշիլի յոյց զրեց հաւաքված անդամների առաջ հետազոտութեան վերաբերող մի սեպագիր, այն է Ռուս II թագաւորի թագաւորութեան ժամանակներից, VIII դար ընկածից առաջ։ Սեպագիրը քարի վրա է փորագրված, որ գտնված է Եջմիածնից 4 վերստ հեռու գտնվող Գ. Գեորգի վանքի մօտ փորուածքների անկու ժամանակ։ Սեպագրի արձանագրութիւնը խօսում է թագաւորի ձեռնարկած գաւառի աշխատութիւնների մասին, այն է՝ փայտեայ կառուցումների, ծառեր սնկելու, ջրանցք անցկացնելու մասին եւ այլն։ Ուսումնում է նորնայն աստուածութիւնների եւ զոհի կենդանիների մասին։ Իսկ այդ սեպագիրը ոչ չնչացնել համարձակվողներին նա սպասում է աստուածների բարկութեամբ եւ պատժով։ Արձանագրութիւնը, ի նկատի ունենալով, որ նա մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում հնագիտական տեսակետից, կը հրատարակվի ընկերութեան հրատարակութիւնների մէջ։

«НОВОСТИ» լրագրի խօսքով, բանտային զըլխաւոր պարչութիւնը, քաղաք վերացվողց յետոյ, անհրաժեշտ համարելով նոր տիպի բանտեր հիմնել, նախագիծում է այդ նպատակով յարմարեցնել հնարաւորութեան չափ այժմ գոյութիւն ունեցող բանտերը։ Նոր տիպի առաջին հիմնարկութիւնը կը լինի Պարկովի բանտարանի տեղը, որ կը շինվի գերմանական բանտերի նման, գիշերը առանձնացնելով բոլոր բանտարկեալներին։ Այդ բանտարանի տան համար յարմարեցված կը լինի Պարկովի բանտային շինութիւնը։ Նոր շինութեան մէջ կը տեղաւորվեն 700 մարդիկ։ Շինութիւնը կը կառուցվի արգաւազատութեան միջոցաւ։ Թեան յատակագծերի համաձայն։ Այդ նպատակին յատկացրած է 600,000 ռուբլի։ Բացի առանձնակի սենականերից, ուր գիշերները անցկացնելու են կարանաւորները, առանձին սենականներ կը լինեն եւ նոր ժամող կարանաւորների համար։ Արհեստանոցները եւ սեղանաւորները ընդհանուր կը լինեն։ Մատուցութիւն կայ նոյնպէս մի շարք արհեստանոցներ, տպարան եւ կատարելագործված հիւանդանոց հիմնելու։ Լուսաւորութիւնը էլ քաղաքական կը լինի ամեն տեղ։

«Правда» թիւերի հաղորդելով, կառավարիչ անատը բացատրել է նորերս, որ թէ եւ նախագահները, ի նկատի ունենալով քաղաքային դուռներին չորսված իրաւունքը՝ փոփոխել իրանց որոշումները, օրինական հիմք ունեն առաջարկել դուռային վերաբնակ իր նախկին որոշումները որ եւ է հարցի վերաբերութեամբ, բայց երբ դուռան հրաժարվի այդ վերաբնակիչից, նրանք (նախագահները) չեն կարող ներկայացնել իրանց պահանջները մայր նկատմամբ իր պարտադիր դուռային համար, որովհետեւ այդպիսի մի պահանջ համար որոշումների ջնջման, որ, կառավարիչ սենատի 1897 թիւ յունիսի 24-ի № 7,804 բացատրութեան համաձայն, իրաւունք ունի անել միայն կառավարիչ սենատը։ Ուստի երբ նախագահ պետները դուռային ի կատարումն դարձրած որ եւ է որոշումն ջնջման ենթակայ համարներ եւ դուռան հրաժարվի վերաբնակ այդ որոշումը, նրանք կարող են միայն դիմել կառավարիչ սենատին եւ ոչ թէ պահանջել դուռային, որ նա անպատճառ վերաբնակ իր որոշումը (№ 8,505)։

«Рус. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ Եկատերինսկայի փաստաբանների մէջ հանգանակված է որոշ գումար Գրիգոր Զանչեանի յիշատակին հիմնվելիք ժողովրդական գրադարանի օգտին։

Ժողովրդական լուսաւորութեան միջնորդութեան մէջ ներկայումս ընկնում է լատիներէն լեզուի ծրագրի կրճատման հարցը այն կանանց համար, որոնք այդ առարկայից ընտրութիւն են ընդունել կանանց բժշկական կուրսերը մտնելու համար։

«Петербург. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ պարսից կառավարութիւնը գնում է ռուս եւ ֆինլանդական շոգենաւատերից տասը ապրանքա-մարդատար շոգենաւոր կապից ծովի վրա երթեկներու համար։ Իւրաքանչիւր շոգենաւոր պէտք է բարձրացնէ մինչև 50 հազար պուլը բեռ։

ՆՕՎՕ-ԱՅՕՆ վանքից (Սուխումի շրջան) մեղ գրում են. «Այսօր, սեպտեմբերի 28-ին, կատարվել էր տաճարի օծման խորհուրդը։ Եկել էին Ռուսաստանի զանազան նահանգներից բազմաթիւ ուխտաւորներ, թուրք Ժողովուրդային 25—26 հազար, Տաճարի հիմքը դրել է Ալեքսանդր III կայսրը Կովկաս այցելելու տարին։ Վանքի բոլոր հիւրանոցները լի են ուխտաւորներով։ չինի են ժամանակաւոր երկու լատիների փայտային տներ, որոնք նոյնպէս լի են. բացի դրանից վանքի ամբողջ բակում, բայց օդի մէջ, կիտված են անթիւ ուխտաւորներ։ Օծման ծիսակատարութիւնը կատարեց Սուխումի Արքեպիսկոպոսը։ Հանգեցին ներկայ էր Գոլթթիսի նահանգապետ Գրիգորեան եւ մի քանի բարձրաստիճան անձինք։ Օծումը սկսվեց առաւօտեան ժամի 7-ին։ Կարգ պահ պահելու համար կանչված է Սուխումից մի զորադուռ իր նուագախմբով. զորքը առանց հրացանի կարգով կանգնած էր տաճարի շուրջը եւ պահպանում էր կարգը։ Երբ արարութիւնը վերջացաւ, վանքի հիւրերն իրարից հեռացան։ Կարգաւորները ուխտաւորներին թէ սեղանաւորներ եւ թէ բայց օդի մէջ, իսկ ճաշից յետոյ ուխտաւորներից շատերը տոմսակներ առան շոգենաւոր ճանապարհով։ Աֆօնից, Ուխտաւորներին նաւահանգստում սպասում էին 5 շոգենաւորներ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՀԱՐԱՆ-ԱՅԻՐԻՍԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԵ-ԴԱՐՁԸ

Մօտ օրերումս լրացաւ արդէն մի ամբողջ տարի այն օրից, երբ հարաւային Աֆրիկայի երկու դաշնակից հանրապետութիւնների զորքերը անցան անգլիական տիրապետութիւնների սահմանը։ Փոքրաթիւ հերոս ժողովրդին

վիճակված չէր մի տարուց յետոյ տեսնել իրան վերջնականապէս ազատված բրիտանական անընդհատ օպպոնական պահանջներից։ Նրան վիճակված չէր հեռացնել այն Դաւոկիւնան սուրբ, որ միշտ կախված էր նրա գլխի վրա։ Ընդհանրապէս քաղաքի, բայց դժբաղդ ժողովուրդը կորցրեց նաեւ այն, ինչ որ ունէր. Դաւոկիւնան սուրբ կատարեց վերջապէս իր զոհուելի դործը եւ Տրանսվալի ու Օրանժեան հանրապետութիւնների անունները անցան պատմական աւանդութիւնների կարգը։

Բայց պէտք է արդեօք յիշուի վերջապած համարել հարաւ-աֆրիկական պատերազմը, ոչնչացան արդեօք վերջնականապէս Տրանսվալեան եւ Օրանժեան հանրապետութիւնները՝ այս հարցին եւրօպական մամուլը գնահատան, միմեանց հակասող, պատասխաններ է տալիս։ Լրագիրների մի մասը, առաւելապէս անգլիական իմպերիալիստական լրագիրները պնդում են, որ համաձայն անգլիական կառավարութեան յայտարարութեան, պէտք է պատերազմը վերջացած համարել, իսկ այն մասն-մուտը զորաբաժինները, որոնք մինչև այժմ անձնատուր չեն եղել անգլիականներին, պէտք է համարվեն հրաժարվել իմքեր, որոնք հետ վարվելու է ոչ պատերազմական միջադպրիս օրէնքներով, այլ այնպէս, որպէս վարվում են աւազակների հետ։ Սակայն նոյն իսկ անգլիական լրագիրների մէջ կան այնպիսիները, որոնք համաձայն չեն այդ կարծիքին։ Այսպէս «Morning Leader», հարաւ-աֆրիկական պատերազմի տարեգրքի աւթիով՝ պատմական անկարելի ձգելով այդ պատերազմի վրա, ի միջի պլոց գրում է.

«Նոյն իսկ պաշտօնական տեղեկութիւններից կարելի է տեսնել, որ բրիտանական զորքերը դեռ եւս շատ դուրս են իրենց կատարելու հարաւային Աֆրիկայում։ Այսպէս, օրինակ, Լինդլէյ քաղաքը, որ վերջին հինգ ամսվայ ընթացքում տասն անգամ անցել է բռնիների բռնիքին, նորից գրավւած է բռնիական մի զորաբաժնից, որ բարձրացրել է այնտեղ հանրապետական զորակը քաղաքային վարչութեան տան վրա։ Զորաբաժինը կազմված է այնպիսի համարձակ զինուորներից, որոնք որոշել են դիմաւալ ամեն մի ներթափան, անել ամեն ինչ, որ միայն հնարաւոր է, առել թըշնամուն դիմադրելու համար։ Նրանք ունեն «դուռ-դուռ» անուանված գնդակներ, թէ իրանք կոռուղները եւ թէ նրանց ձիաները ամենալաւ դրութեան մէջ են։ Այդ տեսակ զինուորները կարող են դեռ եւս մի ամբողջ տարի շարունակել պատերազմը։

Նոյնպիսի կարծիք է յայտնում այս հարցի մասին եւ «НОВОСТИ» լրագիրը. «Նախագահ Կրեմլին»-ասում է նա իր առաջնորդող յօդուածում—ուղեւորվում է Լորենցո-Մարկեզէյից Տրիեստ եւ ապա Բրիւսել։ Նշանակում է արդեօք այդ հանգամանքը, թէ յիշուի հարաւ-աֆրիկական պատերազմը վերջացած է։ Ամենուհեւ։ Պատերազմը շարունակվում է նախ այն պատճառով, որ բռնիների զօրքը դեռ եւս չի նախափ Ինչ եղել, երկրորդ՝ որ երկու հանրապետութիւնների երկիրները դեռ եւս ամբողջովին գրավւած չեն անգլիացիներից։ Անգլիական զորքերը տիրել են միայն երկաթուղային գծին եւ խոյս են տալիս որքան եւ իցէ հեռու գնալ այդ գծից։ Անկերել է, որ միայն երկաթուղային գծի եւ նրա վրա գետեղված քաղաքների գրաւումը ոչ մի կերպ չէ կարող համարվել երկու հանրապետութիւնների երկիրների իրականաւոր եւ իսկական նուաճում։ Այս պատճառով, երբ «Times» հայտարարութեամբ յայ եւս գոյութիւն չունենա՝ այդ խօսքերը պէտք է հասկանալ լոկ որպէս ճարտասանական դարձած, որ չէ ապացուցվում փաստերով։

«Ո՛չ, հանրապետութիւնները գոյութիւն ունեն, որովհետեւ նրանց զօրքերը շարունակում են պատերազմել։ Դէվէտ, Բոտա եւ բռնիների միւս քաջ զորապետները իրանց զօրաբաժիններով ազատ չըլում են անգլիական նուաճումների սահմանից դուրս։ Պատերազմը կը շարունակվի, մինչև որ բոլորովին սպաւորվան բռնիների ոյժերը եւ այժմ ամենուհեւ հնար չը կայ որոշուի, թէ երբ կը հասնի պատերազմի վերջնական աւարտի րօպէս։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Յրանախական լրագիրները հաղորդում են, որ պարսկական առաջիկայ նստաբնակը կը բացվի համալսարանի ցուցահանդէսի փակման հետեւեւ օրը—հոկտեմբերի 24-ին (նո-

